ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Ն ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/33

ք. Բյուրեղավան **«09» հուլիս 2021 թ.**

«Բյուրեղավանի համայնքապետարանը», ի դեմսհամայնքի ղեկավար Հ. Բալասյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱԳԱՐԱԿ» ԲԲԸ-ն, ի դեմս տնօրեն Կ. Բարսեղյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Բյուրեղավան համայնքի «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի շենքի նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 160 օրացույցային օր (20.12.2021 թվական):

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N – Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ով սահմանված ռեսուրսները:

3⍰4⍰13 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 54.900.000 (հիսունչորս միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 9.150.000 (ինը միլիոն հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝

պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարան **Հասցեն՝ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վ. Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք** **ՀՎՀՀ-03546187** **Հ/Հ900102252195** **ՀՀ ՖՆ գործառնական վարչություն** **Համայնքի ղեկավար Հ. Բալասյան**	**«Ագարակ» ԲԲԸ** **հասցե՝ ՀՀ, Արագածոտն մարզ գյուղ Փարպի** **Հայբիզնեսբանկ ՓԲԸ** **Հ/Հ՝ 11500-08007517564** **ՀՎՀՀ 05003862** **հեռ. +374 232-3-32 -22 +374 91-40-78-26** **էլ. փոստ՝ agarak_shin@mail.ru** **Տնօրեն՝ Կ. Բարսեղյան**
---------- **/ստորագրություն/** **Կ.Տ**	**----------** **/ստորագրություն/** **Կ.Տ**

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
« 09 » Հուլիս 2021 թ. կնքված
ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/33 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

«ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ-ի ՇԵՆՔԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

h/h	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափի միավոր	Քանակը	Գինը	Գումարը	Տոկոս
1	2	3	4	5	6	
	Շենքի ներսի քանդման աշխատանքներ					
1	Առաջին հարկի միջանցքի հատակի գրանիտե սալիկերի քանդում	մ²	87.00	1.87	163.02	
2	Առաջին հարկի պատերից տրավերտինե և տուֆե սալվածքի քանդում	մ²	73.00	1.87	136.79	
3	Առաջին հարկի մուտքի բարավորի քանդում	մ³	0.38	28.11	10.68	
4	Առաջին հարկի հարկի հատակի հարթեցնող շերտի քանդում	մ²	22.30	1.41	31.34	
5	Առաջին հարկի պատերից ներկի մաքրում	մ²	440.00	0.28	123.67	
6	Առաջին հարկի միջնորմների քանդում	մ²	16.50	1.12	18.55	
7	Երկրորդ հարկի միջանցքի հատակի գրանիտե սալիկերի քանդում	մ²	104.00	1.87	194.88	
8	Երկրորդ հարկի պատերից տրավերտինե սալվածքի քանդում	մ²	65.00	1.87	121.80	
9	Երկրորդ հարկի պատերից ներկի մաքրում	մ²	501.00	0.28	140.82	
10	Երկրորդ հարկի միջնորմների քանդում	մ²	4.40	1.12	4.95	
11	Երկրորդ հարկի հարկի հատակի հարթեցնող շերտի քանդում	մ²	271.00	1.41	380.85	
12	Երրորդ հարկի պատերից տրավերտինե սալվածքի քանդում 1,0մ առաստաղից	մ²	43.00	1.87	80.57	
13	Երրորդ հարկի պատերից ներկի մաքրում	մ²	603.00	0.28	169.49	
14	Երրորդ հարկի միջնորմների քանդում	մ²	34.00	1.12	38.23	
15	Երրորդ հարկի հարկի հատակի հարթեցնող շերտի քանդում	մ²	221.00	1.41	310.59	
16	Բեռնում շինարարական աղբի ավտոմոբիլային փոխադրումների ժամանակ	տ	62.57	2.81	175.87	
17	Շինաղբի տեղափոխում 1 կմ հեռավորության վրա	տ	62.57	2.81	175.87	4.98
	Ընդամենը				**2277.96**	
	Համաշինարարական աշխատանքներ Առաջին հարկ					
1	Գաջի շաղախով սվաղի նորոգում	մ²	12.00	1.31	15.77	
2	Ջրամակեուսիչ շերտի իրականացում առաջին հարկում	մ²	223.00	1.64	366.41	
3	Միջնորմների կառուցում առաջին հարկում 15 սմ հաստ. բեմզաբլոկներից	մ²	15.00	5.92	88.73	
4	Պեմզաբլոկե շարվածքի ամրանավորում	տ	0.01	460.07	4.60	
5	Հատակների իրականացում պրեսգրանիտե 600x600 սալիկներից	մ²	90.00	9.86	887.28	
6	Հատակների իրականացում խեցեգործական 330x330 սալիկներից	մ²	11.00	9.86	108.44	
7	Լամինատե հատակների պատրաստում C5 կարգի 8 մմ հաստությամբ սպունգով և շրիշակով	մ²	129.15	5.92	763.94	

8	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտի իրականացում 30 մմ հաստությամբ	մ²	223.00	1.31	293.13	
9	Պրեսգրանիտե շրիշակի իրականացուցում H=10 սմ 50 գծ.մ	մ²	5.00	13.14	65.72	
10	Կախովի առաստաղների իրականացում հիմնակմախքով, գիպսակարտոնով12.5մմ հաստմետաղակա պրոֆիլների վրա	մ²	223.59	5.26	1175.62	
11	Պատերի բարձրակարգ ներկում կիսափայլ լատեքսային ներկով համատարած մածկապատումով	մ²	535.00	1.64	879.06	
12	Տուֆի շարվածքի վրա և առաստաղի տակ փրփրապլաստե քիվի 50 մմ տեղադրում	մ	34.00	2.63	89.38	
13	Առաստաղների ներկում լատեքսով բարելավված որակի կիսափայլուն	մ²	224.00	1.64	368.06	
14	Ջեռուցման մարտկոցների ասպարում լամինատե ներկապատ սալերով 16մմ 3-րդ հարկ 08մ*0,65մ*14	մ²	7.28	23.00	167.47	
15	Պատերի շեպերի սվաղում ցեմենտավազայի շաղախով	մ²	73.00	1.31	95.96	
16	Պատերի երեսապատում կերամիկական 200x300 սալիկներով լվացարանների հետնամաս 1,2*11	մ²	18.00	9.86	177.46	
17	Տրավերտինե պատի հղկում	մ²	29.00	1.97	57.18	
18	Տրավերտինե պատի լաքապատում	մ²	29.00	1.31	38.12	
19	Պատերի երեսապատում 40մմ տուֆե սալերով 100մմ	մ²	1.85	13.14	24.32	
20	Բետոնե նախաշերտի իրականացում B12.5 դասի բետոնից 150 մմ էլեկտրովահանակի խցի նախաշեմում	մ³	1.23	39.43	48.50	12.37
	Ընդամենը				**5715.15**	
	Երկրորդ հարկի աշխատանքներ					
1	Միջնորմների կառուցում երկրորդ հարկում 15 սմ հաստ. բեմզաբլոկներից	մ²	3.73	7.47	27.88	
2	Պեմզաբլոկե շարվածքի ամրանավորում	տ	0.01	581.33	5.81	
3	Հատակների իրականացում պրեսգրանիտե 600x600 սալիկներից	մ²	104.00	12.46	1295.52	
4	Գաջի շաղախով սվաղի նորոգում	մ²	18.00	2.08	37.37	
5	Հատակների իրականացում լվացարանների տակ ,միջանցք, սենյակ խեցեգործական 330x330 սալիկներից	մ²	25.26	12.46	314.66	
6	Լամինատե հատակների պատրաստում C5 կարգի 8 մմ հաստությամբ սպունգով և շրիշակով	մ²	173.20	7.47	1294.53	
7	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտի իրականացում 30 մմ հաստությամբ	մ²	276.00	1.66	458.42	
8	Պրեսգրանիտե շրիշակի իրականացուցում H=10 սմ 50 գծ.մ	մ²	7.00	16.61	116.27	
9	Կախովի առաստաղների իրականացում հիմնակմախքով, գիպսակարտոնով12.5մմ հաստմետաղակա պրոֆիլների վրա	մ²	296.09	6.64	1967.14	
10	Պատերի բարձրակարգ ներկում կիսափայլ լատեքսային ներկով համատարած մածկապատումով	մ²	573.00	2.08	1189.64	
11	Տուֆի շարվածքի վրա և առաստաղի տակ փրփրապլաստե քիվի 50 մմ տեղադրում	մ	120.00	3.32	398.62	
12	Առաստաղների ներկում լատեքսով բարելավված որակի կիսափայլուն	մ²	296.00	2.08	614.54	
13	Ջեռուցման մարտկոցների ասպարում լամինատե ներկապատ սալերով 16մմ 3-րդ հարկ 08մ*0,65մ*17	մ²	8.84	29.07	256.95	
14	Պատերի շեպերի սվաղում ցեմենտ ավազի շաղախով	մ²	73.00	1.66	121.25	

15	Պատերի երեսապատում կերամիկական 200x300 սալիկներով լվաց կողքերով , սենյակ7 պատեր h-1,5մ	մ²	33.00	12.46	411.08	
16	Տրավերտինե պատի հղկում	մ²	76.00	2.49	189.35	
17	Տրավերտինե պատի լաքապատում	մ²	76.00	1.66	126.23	
18	Պատերի երեսապատում 40մմ տուֆե սալերով	մ²	6.13	16.61	101.81	
19	Պատերի երեսապատում 25 մմ տրավերտինե սալերով	մ²	2.20	13.14	28.92	
	Ընդամենը				**8955.99**	
	Երրորդ հարկի աշխատանքներ					
1	Հատակների իրականացում խեցեգործական 330x330 սալիկներից	մ²	57.76	10.66	615.87	
2	Լամինատե հատակների պատրաստում C5 կարգի 8 մմ հաստությամբ սպունգով և շրիշակով	մ²	158.83	5.69	903.21	
3	Գաջի շաղախով սվաղի նորոգում	մ²	22.00	1.78	39.10	
4	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտի իրականացում 30 մմ հաստությամբ	մ²	212.00	1.42	301.39	
5	Կախովի առաստաղների իրականացում հիմնակմախքով, գիպսակարտոնով12.5մմ հաստ մետաղակա պրոֆիլների վրա	մ²	275.58	5.69	1567.13	
6	Պատերի բարձրակարգ ներկում կիսափայլ լատեքսային ներկով համատարած մածկապատումով	մ²	573.00	1.78	1018.27	
7	Տուֆի շարվածք վրա և առաստաղի տակ փրփրապլաստե քիվի 50 մմ տեղադրում	մ	94.00	2.84	267.27	
8	Առաստաղների ներկում լատեքսով բարելավված որակի կիսափայլուն	մ²	276.00	1.78	490.47	
9	Պատերի շեպերի սվաղում ցեմենտավազային շաղախով	մ²	73.00	1.42	103.78	
10	Պատերի երեսապատում կերամիկական 200x300 սալիկներով	մ²	36.40	10.66	388.11	
11	Տրավերտինե պատի հղկում	մ²	76.00	2.13	162.07	
12	Տրավերտինե պատի լաքապատում	մ²	63.00	1.42	89.56	
13	Պատերի երեսապատում 40մմ տուֆե սալերով	մ²	4.68	14.22	66.53	
14	Ջեռուցման մարտկոցների ասպարում լամինատե ներկապատ սալերով 16մմ 3-րդ հարկ 08մ*0,65մ*18	մ²	9.36	24.88	232.87	
15	Պատերի երեսապատում 25 մմ տրավերտինե սալերով	մ²	2.2	14.22	31.28	
16	Գրանիտե հատակների հղկում	մ²	73.00	2.84	207.56	
	Աստիճանավանդակներ երեք հարկում			0.00	0.00	
1	Տրավերտինե պատի հղկում	մ²	107.00	2.13	228.18	
2	Տրավերտինե պատի լաքապատում	մ²	107.00	1.42	152.12	
3	Կախովի առաստաղների իրականացում հիմնակմախքով, գիպսակարտոնով12.5մմ հաստ մետաղական պրոֆիլների վրա	մ²	39.97	5.69	227.30	
4	Առաստաղների ներկում լատեքսով բարելավված որակի կիսափայլուն	մ²	39.97	1.78	71.03	
5	Աստճանների կողքերի երեսպատում լամինատով	մ²	3.40	24.88	84.59	
6	Աստիճանների արծաթափայլ բազրիքների տեղադրում	մ	21.75	17.77	386.52	
7	Գրանիտե աստիճանատքի հղկում	մ²	38.00	2.63	99.90	16.91
	Ընդամենը				**7734.11**	
	Դռներ առաջին հարկ					
1	Փայտե դռների ապամոնտաժում	մ²	18.70	1.07	19.97	
2	Մետաղապլաստե դռների ապամոնտաժում	մ²	11.99	1.07	12.81	
3	Այլումինե դուռ ջերմային կամուրջով տեղադրում 46մմ հաստությամբ	մ²	2.97	71.20	211.47	
4	Այլումինե շրջանակով ապակյա դուռ երկողմանի բացվածքով ջերմային կամուրջով տեղադրում 46մմ հաստությամբ	մ²	9.02	71.20	642.23	

5	Մետաղապլաստե խուլ դռան տեղադրում	մ²	21.42	38.45	823.57	
6	Պատերի շեպերի սվաղում ցեմենտավազային շաղախով	մ²	6.00	1.42	8.54	
	Դռներ երկրորդ հարկ			0.00	0.00	
1	Փայտե դռների ապամոնտաժում	մ²	23.20	1.07	24.78	
2	Մետաղապլաստե խուլ դռան տեղադրում	մ²	23.20	38.45	892.00	
3	Պատերի շեպերի սվաղում ցեմենտավազային շաղախով	մ²	7.00	1.42	9.97	
	Դռներ երրորդ հարկ			0.00	0.00	
1	Փայտե դռների ապամոնտաժում	մ²	32.12	1.07	34.30	
2	Մետաղապլաստե խուլ դռան տեղադրում	մ²	28.56	38.45	1098.09	
3	Պատերի շեպերի սվաղում ցեմենտավազային շաղախով	մ²	8.00	1.42	11.39	
4	Ալյումինե շրջանակով ապակյա վիտրաժի տեղադրում 46մմ հաստությամբ	մ²	13.20	42.72	563.91	
	Գլխավոր մուտքի մետաղական հովանոցներ			0.00	0.00	
10	Կախովի առաստաղների իրականացում գունավոր պլաստմասից	մ²	12.0	4.27	51.26	
	Շտապ օգնության մուտքի մետաղական հովանոցներ		0.0	0.00		
10	Կախովի առաստաղների իրականացում գունավոր պլաստմասից	մ²	4.0	4.27	17.09	
	Մեքենաների բաց հովանոցի մետաղական ծածկ		0.0	0.00	0.00	
9	Կախովի առաստաղների իրականացում գունավոր պլաստմասից	մ²	40.0	4.27	170.88	
	Մետաղական աստիճանների և ծածկի իրականացում		0.0	0.00	0.00	
13	Կախովի առաստաղների իրականացում գունավոր պլաստմասից	մ²	14.0	4.27	59.81	10.31
	Ընդամենը				**4672.05**	
	Հրդեհային ազդանշանում					
1	16 մուտքանի հսկիչ պանել LSD ստեղնաշարով	հատ	1.00	119.18	119.18	
2	Բջջային հեռախոսահամարից ավտոմատ ահազանգի սարք	հատ	1.00	119.18	119.18	
3	Ավտոնոմ սնուցման բլոկ 1,5կՎտ	հատ	1.00	238.36	238.36	
4	Մարտկոց 12կՎ	հատ	1.00	99.32	99.32	
5	Հրդեհային ձեռքի ազդասարք	հատ	7.00	11.92	83.43	
6	Ծխային տվիչ	հատ	149.00	11.92	1775.82	
7	Ջերմային տվիչ	հատ	4.00	11.92	47.67	
8	Լուսաձայնային ազդասարք	հատ	3.00	11.92	35.75	
9	Մալուխ պղնձե հրակայուն 4x0,75	մ	1100.00	0.79	874.00	
10	Մալուխ պղնձե ջիղերով, մեկուսացված, հատվածքը 3x1,5 ք.մմ	մ	7.00	0.79	5.56	
11	Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ, այրմանը չնպաստող Մ15	մ	1100.00	0.10	109.25	
12	Մետաղական ճոպան(տրոս) Ø4	մ	55.00	0.50	27.31	
13	Մետաղ ամրակապման համար	կգ	25.00	0.99	24.83	
14	Երկաթակապ	հատ	2600.00	0.01	25.82	
15	500 մմ հաստության պատի մեջ անցքի բացում	հատ	12.00	0.99	11.92	
16	Անցքի փակում	մ³	0.72	59.59	42.91	
17	100 մմ և 200 մմ հաստության պատի մեջ անցքի բացում	հատ	50.00	0.99	49.66	
18	Անցքի փակում	մ³	1.50	59.59	89.39	
19	Միջհարկային ծածկի մեջ անցքի բացում	հատ	6.00	0.99	5.96	
20	Անցքի փակում	մ³	0.18	59.59	10.73	
21	Ակոսների բացում	մ	900.00	0.20	178.77	
22	Ակոսների փակում	մ³	2.70	59.59	160.90	9.31
	Ընդամենը			0.00	**4254.91**	
	Տեսադիտական համակարգ			0.00	0.00	
1	Ցանցային տեսաձայնագրիչ	հատ	1.00	158.78	158.78	
2	Կոշտ սկավառակ	հատ	4.00	132.32	529.26	
3	Անխափան սնուցման աղբյուր	հատ	1.00	132.32	132.32	
4	Մոնիտոր 32	հատ	1.00	291.09	291.09	

5	Գունավոր տեսախցիկ ներքին տեղադրման	հատ	10.00	39.69	396.95	
6	Կրոնշտեյն տեսախցիկների տեղադրման համար	հատ	10.00	13.23	132.32	
7	Կոնեկտեր 1000ՄԲ/վ արագություն ապահովող	հատ	20.00	39.69	793.89	
8	Մալուխ CCTV4+1	մ	300.00	1.06	317.56	
9	Երկաթակապ	հատ	750.00	0.0132	9.92	
10	Տուփ բաժանարար 100x100	հատ	10.00	1.06	10.59	
11	Պոլիէթիլենային էլեկտրատեխն. գոֆրե խողովակ, 20 մմ	մ	300.00	0.26	79.39	
12	Պոլիէթիլենային վաք 100x50 մմ ամրակապման դետալներով	մ	30.00	1.98	59.54	
13	Պոլիվինիլքլորիդե խողովակ 100մմ	մ	30.00	1.98	59.54	
14	Անցքի փակում	մ³	0.03	79.39	2.38	
15	Միջհարկային ծածկի մեջ անցքի բացում	հատ	2.00	1.32	2.65	
16	Անցքի փակում	մ³	0.06	79.39	4.76	6.51
	Ընդամենը				**2980.94**	
	Ջրամատակարարում					
1	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում DN25(32x3 մմ) խողովակի փորձարկում, աղտահանում, լվացում	մ	40.00	2.52	100.89	
2	Պոլիպրոպիլենե խողովակների տեղադրում DN25(32x2,3 մմ) խողովակի փորձարկում, աղտահանում, լվացում	մ	15.00	2.52	37.84	
3	Պոլիպրոպիլենե խողովակների ալյումինե շերտով տաք ջրի համար PN20 տեղադրումով d=25 խողովակի փորձարկում, աղտահանում, լվացում	մ	80.00	2.52	201.79	
4	Պոլիպրոպիլենե խողովակների ալյումինե շերտով տաք ջրի համար PN20 տեղադրումով d=20 խողովակի փորձարկում, աղտահանում, լվացում	մ	120.00	2.52	302.68	
5	Պոլիպրոպիլենե խողովակների անկյունակներ 32մմ	հատ	24.00	0.84	20.18	
6	Պոլիպրոպիլենե խողովակների անկյունակներ 25մմ	հատ	40.00	0.84	33.63	
7	Պոլիպրոպիլենե խողովակների անկյունակներ 20մմ	հատ	42.00	0.84	35.31	
8	Պոլիպրոպիլենե խողովակների եռաբաշխիկներ 32x25x32մմ	հատ	37.00	0.84	31.11	
9	Պոլիպրոպիլենե խողովակների եռաբաշխիկներ 25x25x25մմ	հատ	30.00	0.84	25.22	
10	Պոլիպրոպիլենե խողովակների եռաբաշխիկներ 20x20x20մմ	հատ	54.00	0.84	45.40	
11	Պոլիպրոպիլենե խողովակների անցում Φ32/25մմ	հատ	33.00	0.84	27.75	
12	Փական d=25մմ	հատ	8.00	2.52	20.18	
13	Փական d=20մմ	հատ	30.00	2.52	75.67	
14	Փական d=15մմ	հատ	44.00	2.52	110.98	
15	Լվացարանի ծորակ խառնարանով	հատ	41.00	12.61	517.09	
16	Արևային վակուումային ոչ ճնշումային կոլեկտորներ 300լ բաքով համալրված էլեկտրական տաքացուցիչով և մոնտաժային կոմպլեկտով	կ-տ	2.00	420.40	840.79	
17	Օդի հեռացման կափույրի կոմպլեկտ	հատ	6.00	12.61	75.67	
18	500 մմ հաստության պատի մեջ անցքի բացում	հատ	10.00	12.61	126.12	
19	Անցքի փակում Բ15	մ³	0.60	50.45	30.27	
20	100 մմ և 200 մմ հաստության պատի մեջ անցքի բացում	հատ	21.00	0.84	17.66	
21	Անցքի փակում	մ³	0.63	50.45	31.78	
22	Պոլիպրոպիլեն մետաղ խողովակների անցում d=25(st)/d=32	հատ	1.00	1.68	1.68	
23	Առկա պոլիէթիլենային բաքի տեղադրում տանիքում V=2000լ	հատ	1.00	16.82	16.82	
24	Հետադարձ փական d=25մմ	հատ	2.00	2.52	5.04	
25	Պողպատե խողովակ d=25 մմ	մ	5.00	2.52	12.61	
26	Պողպատե խողովակի ներկում 2 շերտ հականեխիչ նյութով	մ²	0.39	1.68	0.66	

27	Պոլիվինիլքլորիդե կոյուղու խողովակ d=50 մմ ռետինե սեղմիչ օղակներով	կ-տ	50.00	1.26	63.06	
28	Խողովակների բաքի ջերմամեկուսացում ֆոլգայի շերտով պատված հանքաբամբակով	մ²	50.00	1.68	84.08	
29	Պոմպ Q=2,5մ3 /ժամ H=25մ	կ-տ	1.00	33.63	33.63	
30	Թուջե կոյուղու խողովակների ապամոնտաժում	մ	50.00	0.84	42.04	6.70
	Ընդամենը				**3068.54**	
	Ներքին էլեկտրական լուսավորության ցանց					
1	Պահարան դռնակով վահանակների կոմպլեկտավորման համար 18 մոդուլով (398x230x122 մմ)	հատ	1.00	83.22	83.22	
2	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 32Ա	հատ	1.00	3.47	3.47	
3	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 16Ա	հատ	4.00	1.39	5.55	
4	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 25Ա	հատ	1.00	1.39	1.39	
5	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 32Ա	հատ	2.00	1.39	2.77	
6	Դիֆերենցիալ հոսանքի ավտոմատ անջատիչ միաբևեռ 25Ա Δ/30մԱ	հատ	1.00	1.39	1.39	
7	Պահարան դռնակով վահանակների կոմպլեկտավորման համար 12 մոդուլով (310x220x122 մմ)	հատ	5.00	17.34	86.69	
8	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 32Ա	հատ	15.00	3.47	52.01	
9	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 16Ա	հատ	5.00	1.39	6.94	
10	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 25Ա	հատ	5.00	1.39	6.94	
11	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 32Ա	հատ	20.00	1.39	27.74	
12	Պահարան դռնակով վահանակների կոմպլեկտավորման համար 12 մոդուլով (310x220x122 մմ)	հատ	1.00	17.34	17.34	
13	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 32Ա	հատ	1.00	3.47	3.47	
14	Դիֆերենցիալ հոսանքի ավտոմատ անջատիչ միաբևեռ 25Ա Δ/30մԱ	հատ	1.00	1.39	1.39	
15	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 25Ա	հատ	1.00	1.39	1.39	
16	Լուսատու առաստաղային LED լամպով 220Վ, 30Վտ, 400x400 մմ, 4100K, 2850Lm	հատ	117.00	13.87	1622.82	
17	Լուսատու առաստաղային LED լամպով 220Վ, 18Վտ, 280x280 մմ, 4100K, 1710Lm	հատ	45.00	10.40	468.12	
18	Լուսատու սանհանգույցի LED լամպով 220Վ, 7Վտ, 400x400 մմ, 4100K, 900Lm, 140մմ	հատ	10.00	3.47	34.68	
19	Լուսատու էվակուացիոն LED լամպով 220Վ, 18Վտ, 400x400 մմ, 4100K, 2850Lm, <ԵԼՔ> նշանով, մարտկոցով	հատ	14.00	5.55	77.67	
20	Լուսատու խոնավադիմացկուն LED լամպով 220Վ, 18Վտ, 400x400 մմ, 4100K, 2500Lm	հատ	4.00	5.55	22.19	
21	ՊՊԲ 2x4 մմ² հատվածքով հաղորդալարի անցկացում	մ	800.00	0.55	443.85	
22	ՊՊԲ 2x2,5 մմ² հատվածքով հաղորդալարի անցկացում	մ	2200.00	0.42	915.44	
23	ՊՊԲ 1x4 մմ² հատվածքով հաղորդալարի անցկացում	մ	800.00	0.55	443.85	
24	ՊՊԲ 1x2,5 մմ² հատվածքով հաղորդալարի անցկացում	մ	2200.00	0.28	610.29	
25	ВВГнг 3x2,5 մմ² հատվածքով հաղորդալարի անցկացում	մ	80.00	0.55	44.38	
26	Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ, 20 մմ այրմանը չնպաստող	մ	80.00	0.14	11.10	
27	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 6Ա միեկստեղնավոր	հատ	94.00	1.04	97.79	
28	Ավտոմատ անջատիչ միաբևեռ 6Ա երկստեղնավոր	հատ	4.00	1.04	4.16	
29	Երկբևեռ խրոցակային վարդակ երրորդ հողանցման հպակով, 220Վ, 10Ա	հատ	200.00	1.39	277.40	
30	Երկբևեռ խրոցակային վարդակ երրորդ հողանցման հպակով, 220Վ, 25Ա	հատ	2.00	1.39	2.77	
31	Տուփ անջատիչների և վանդակների տեղադրման համար	հատ	300.00	0.07	20.81	
32	Ճյուղավորման տուփ	հատ	150.00	0.28	41.61	
33	Երկաթակապ (ճարմանդ)	հատ	6500.00	0.01	45.08	

	Ներքին էլեկտրաուժային ցանց			0.00	0.00	
1	Մուտքային վահանակ եռաֆազ անջատիչով	հատ	1.00	83.22	83.22	
2	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 100Ա	հատ	1.00	13.87	13.87	
3	Ավտոմատ անջատիչ եռաբևեռ 32Ա	հատ	7.00	6.94	48.55	
4	Պոլիէթիլենային էլեկտրատեխնիկական գոֆրե խողովակ, 25 մմ այրմանը չնպաստող	մ	145.00	0.07	10.06	
5	ВВГнг 5x4 մմ² հատվածքով հաղորդալարի անցկացում	մ	145.00	1.73	251.40	
6	Երկաթակապ (ճարմանդ)	հատ	360.00	0.03	12.48	
7	Ակոսների բացում	մ	100.00	0.14	13.87	
8	Ակոսների փակում	մ³	0.03	41.61	1.04	
9	500 մմ հաստության պատի մեջ անցքի բացում	հատ	3.00	10.40	31.21	
10	Անցքի փակում	մ³	0.18	41.61	7.49	
11	Միջհարկային ծածկի մեջ անցքի բացում	հատ	7.00	0.69	4.85	
12	Անցքի փակում	մ³	0.21	41.61	8.74	
13	5x50x50մմ , L=2.5մ անկյունային պողպատի տեղադրում	հատ	3.00	6.94	20.81	
14	Պղնձե հաղորդաձող 800x10x5 մմ	մ	1.00	13.87	13.87	
15	Շերտավոր պողպատ 40x5 մմ	մ	30.00	1.39	41.61	
16	Շերտավոր պողպատ 25x5 մմ	մ	20.00	1.39	27.74	
17	Գրունտի մշակում ձեռքով IV կարգ	մ³	5.00	2.08	10.40	
18	Գրունտի հետլիցք տոփանումով	մ³	5.00	0.69	3.47	13.34
	Ընդամենը				6090.35	
	Ընդամենը				45750.00	
	ԱԱՀ 20%				9150.00	
	Ընդամենը				54900.00	

*** Կապալառուն աշխատանքները կատարում է քաղաք Բյուրեղավան 2-րդ փողոց հասցեում:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարան
Հասցեն՝ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վ. Ա Վեհափառի փողոց թիվ 1
վարչական շենք
ՀՎՀՀ-03546187
Հ/Հ900102252195
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Հ. Բալասյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ագարակ» ԲԲԸ

հասցե՝ ՀՀ, Արագածոտն մարզ գյուղ Փարպի

Հայբիզնեսբանկ ՓԲԸ

Հ/Հ՝ 11500-08007517564
ՀՎՀՀ 05003862

հեռ. +374 232-3-32 -22 +374 91-40-78-26

էլ. փոստ՝ agarak_shin@mail.ru

Տնօրեն՝ Կ. Բարսեղյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 1.1
«09» Հուլիս 2021 թ. կնքված
ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/33 ծածկագրով պայմանագրի

ՑԱՆԿ

հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման

Չափաբաժնի N՝			
Օգտագործվելիք նյութերի			Աշխատակիցների քանակը, որոնց միջոցով պետք է ապահովվի պայմանագրի կատարումը
Անվանում	Քանակ	Գումար/դրամ	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարան
Հասցեն՝ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վ. Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք
ՀՎՀՀ-03546187
Հ/Հ900102252195
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Հ. Բալասյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ագարակ» ԲԲԸ

հասցե՝ ՀՀ, Արագածոտն մարզ գյուղ Փարպի

Հայբիզնեսբանկ ՓԲԸ

Հ/Հ՝ 11500-08007517564
ՀՎՀՀ 05003862

հեռ. +374 232-3-32 -22 +374 91-40-78-26

էլ. փոստ՝ agarak_shin@mail.ru

Տնօրեն՝ Կ. Բարսեղյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«09» Հուլիս 2021 թ. կնքված
ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/33 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
««ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ-ի ՇԵՆՔԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» » ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
1	**ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՆԴՐԱՆԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊՈԼԻԿԼԻՆԻԿԱ» ՓԲԸ-ի ՇԵՆՔԻ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ**	**Պայմանագիրը կնքման օրվանից**	**160 օրացույցային օր**
ԸՆԴԱՄԵՆԸ			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի

համայնքապետարան
Հասցեն՝ համայնք Բյուրեղավան քաղաք
Բյուրեղավան Վ. Ա Վեհափառի փողոց թիվ 1
վարչական շենք
ՀՎՀՀ-03546187
Հ/Հ900102252195
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Հ. Բալասյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ագարակ» ԲԲԸ

հասցե՝ ՀՀ, Արագածոտն մարզ գյուղ Փարպի

Հայբիզնեսբանկ ՓԲԸ

Հ/Հ ՝ 11500-08007517564
ՀՎՀՀ 05003862

հեռ. +374 232-3-32 -22 +374 91-40-78-26

էլ. փոստ՝ agarak_shin@mail.ru

Տնօրեն՝ Կ. Բարսեղյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
«09» Հուլիս 2021 թ. կնքված
ԿՄԲՀ-ԳՀԱՇՁԲ-21/33 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211254	Բյուրեղավան համայնքի «Անդրանիկ Պետրոսյանի անվան Բյուրեղավանի քաղաքային պոլիկլինիկա» ՓԲԸ-ի շենքի նորոգման աշխատանքներ	--	--	--	--	--	--	10980000	21960000	27450000	27450000	38430000	54900000	54900000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավանի

համայնքապետարան
Հասցեն՝ համայնք Բյուրեղավան քաղաք
Բյուրեղավան Վ. Ա Վեհափառի փողոց թիվ 1
վարչական շենք
ՀՎՀՀ-03546187
Հ/Հ900102252195
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Համայնքի ղեկավար Հ. Բալասյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Ագարակ» ԲԲԸ

հասցե՝ ՀՀ, Արագածոտն մարզ գյուղ Փարպի

Հայբիզնեսբանկ ՓԲԸ

Հ/Հ՝ 11500-08007517564
ՀՎՀՀ 05003862

հեռ. +374 232-3-32 -22 +374 91-40-78-26

էլ. փոստ՝ agarak_shin@mail.ru

Տնօրեն՝ Կ. Բարսեղյան

/ստորագրություն/

Կ.Տ